Ժուկով ժամանակով հեռավոր մի երկրում արևի շողի ոսկե կաթիլն ընկավ հողին, և կաթիլից կախարդական բուժիչ ոսկեծաղիկ բուսնեց: Ծաղիկի տեղը միայն մեկը գիտեր՝ Մայր Գոթել անունով զոռոզ ու եսասեր մի ծեր կին, և դրա մոգական զորությամբ երիտասարդ ու գեղեցիկ էր մնում:

Հարյուրավոր տարիներ անցան, և ոսկեծաղիկից ոչ հեռու մի փառապանծ թագավորություն ծաղկեց: Իսկ հավերժ երիտասարդ ու հավերժ գեղեցիկ Մայր Գոթելը ստվերում թաքնված՝ իր անգին ծաղիկն էր հսկում:

Օրերից մի օր թագուհին ծանր հիվանդացավ: Ողջ թագավորությունը սկսեց կախարդական ծաղիկը փնտրել, որ բուժի սիրելի թագուհուն: Ծաղիկը գտան: Թագուհին ոսկի թերթերի թուրմը խմեց և շատ շուտով առողջացավ, իսկ որոշ ժամանակ անց մի փոքրիկ դստրիկ ունեցավ: Ի նշան այս երջանիկ իրադարձության՝ թագավորն ու թագուհին գիշերային երկինք լուսավառ լապտերներ բաց թողին:

Զորացած ու կնճռոտ՝ մոլեգնած Մայր Գոթելը գաղտագողի արքայական դղյակի մանկասենյակը գնաց: Եվ երբ քթի տակ իր կախարդանքի մեղեդին մրմնջաց, տեսավ, որ օրորոցում մանկիկի ոսկի մազերը շողացին, իսկ ինքը նորից ջահել ու գեղեցիկ դարձավ: Կամացուկ մոտեցավ օրորոցին ու մի մազափունջ կտրեց, որ հետը տանի, բայց մեկ էլ նկատեց, որ մազերի ցոլքը մարել է: Եվ հասկացավ, որ երիտասարդ մնալու միայն մի ձև կա. աղջիկը պիտի շարունակ իր կողքին լինի: Նախքան թագավորն ու թագուհին ուշքի կգային, նա բարուրը ճանկեց ու կորավ խավարում:

գիրքն ամբողջությամբ՝

ԱՅՍՏԵՂ